ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 հոկտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

139
(2805)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՖՖ-Ն ԼՈՒՌ Է. ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՆ ՄԱՏՆՎԵԼ

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը սեպտեմբերի 9-ին ոչ-ոքի՝ 1:1 ավարտեց «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի արտագնա հանդիպումը D խմբի առաջատար Թուրքիայի ընտրանու հետ:

Բնականաբար, տեղի ունեցած հանդիպումը իրենից ենթադրում էր սպորտային միջոցառում՝ թաքնված քաղաքական աստառով:

Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայկական հավաքականից եւ նրանց հետ Թուրքիա մեկնածները պատմել են, որ սեպտեմբերի 9-ին Թուրքիայի Էսքիշեհիր քաղաքում Հայաստանի ազգային հավաքականի եւ Թուրքիայի ընտրանու հանդիպման նախորդ գիշերը թուրք երկրպագուները սուլոցներով, աղաղակներով շրջապատել են այն հյուրանոցը, որտեղ անցկացրել են գիշերակացը հայ ֆուտբոլիստները: Աղմկելով նրանք նպատակ են հետապնդել թույլ չտալ ֆուտբոլիստներին քնել, հանգստանալ եւ հաջորդ օրը հավուր պատշաճի խաղալ մարզադաշտում:

Դրանից զատ, բոլորս էլ տեսանք, որ հանդիպման ընթացքում բազմաթիվ ագրեսիվ գործողություններ կատարվեցին հենց մարզադաշտում մեր ֆուտբոլիստների հետ (սուլոցներ, հայհոյանքներ, շշերի նետում ֆուտբոլիստների վրա եւ այլն):

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ՝ճշտելու, թե ՀՖՖ-ն այս առնչությամբ ինչ քայլեր է ձեռնարկել:

Ինչու՞ Հայաստան-Խորվաթիա խաղի ժամանակ դրոնով դաշտի վերեւում դուրս բերված Արցախի դրոշը Ադրբեջանը համարում է «սադրանք» եւ դիմում ՈՒԵՖԱ՝որպես բողոք, իսկ ՀՖՖ-ն որեւէ բողոք չի ներկայացրել թուրքերի վարքագծի եւ անօրինականությունների մասով:

Այս առումով՝ «ձայն բարբառո հանապատի»: ՀՖՖ-ն նախ խոստացավ հնարավորինս արագ պատասխանել պաշտոնական հարցմանը, որը ուղարկվել էր մեր կողմից, ապա պարզապես ցուցաբերեց մեռելային լռություն, ինչպես հատուկ է իշխող քաղաքական ուժին, որի մասին «Ժողովուրդ» օրաթերթը օրերս գրել էր:

Հիշեցնենք նաեւ, որ դեռեւս ապրիլին, երբ Հայաստանում ընթանում էր Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, որին ի սկզբանե նախատեսված էր ադրբեջանցի մասնակիցների ընդգրկումը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը հայտարարեց, որ Ադրբեջանը պահանջել է հավելյալ անվտանգային միջոցառումներ, որոնց մասին բարձրաձայնել չցանկացավ: Ավելի ուշ դիզայներ Արամ Նիկոլյանը բացման միջոցառմանը վառեց Ադրբեջանի դրոշը, ինչի հետեւանքով Ադրբեջանի ջանքերով Ծանրամարտի աշխարհի առաջնության՝Հայաստանում կայանալը չեղարկվեց:

Եվ այսպես, բոլոր ոլորտներում Ադրբեջանը կշարունակի «իրենը առաջ տանել», իսկ ՀՀ իշխանությունը փոխարենը կլռի ու բարձրագոչ հայտարարություններ կանի միայն ԱԺ ամենաբարձր ամբիոնից եւ միայն ընդդիմության հասցեին:

Հայաստանի՝Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում մշտական եւ լիազոր ներկայացուցչի հարցը մնում է առկախված: Դեռեւս այս տարվա սեպտեմբերի 5-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը Վիկտոր Բիյագովին հետ էր կանչել ՀԱՊԿ-ում ՀՀ մշտական եւ լիազոր ներկայացուցչի պաշտոնից, եւ մինչ օրս այդ պաշտոնում նոր նշանակում չի եղել: Ստացվում է, որ Հայաստանը ՀԱՊԿ-ից դուրս չի եկել, բայց եւ որեւէ մեկի չի նշանակում այդ կառույցում: Հիշեցնենք, որ Վիկտոր Բիյագովը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում ՀՀ մշտական եւ լիազոր ներկայացուցիչ էր նշանակվել 2018 թվականին: 2017թ.-ից այդ պաշտոնը զբաղեցնում էր գեներալ Յուրի Խաչատուրովը: Հեղափոխությունից հետո Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հետ կանչեց Խաչատուրովին այդ պաշտոնից, քանի որ նրան մեղադրանք էր առաջադրվել «Մարտի 1»-ի գործով. Խաչատուրովը մեղադրվում էր սահմանադրական կարգը տապալելու համար: Մեղադրանքի առաջադրումը բողոքներ էր առաջացրել ՀԱՊԿ կառույցի ներսում: Ինչ վերաբերում է Բիագովին, ապա նա մինչ ՀԱՊԿ-ը՝2014-2018 թվականներին, Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետն էր: ՀԱՊԿ-ում ՀՀ նախկին ներկայացուցիչ Բիյագովն այժմ նշանակվել է Նիդեռլանդների Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝հայ-ռուսական հարաբերությունների լարվածության ֆոնին Հայաստանը որոշել է ՀԱՊԿ-ում ՀՀ մշտական եւ լիազոր նոր ներկայացուցիչ չնշանակել: ԱԳՆ-ից, այնուամենայնիվ, «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքվեց՝արդյոք ՀԱՊԿ-ում Հայաստանը նոր ներկայացուցիչ նշանակելու է, թե ոչ, երբ եւ ովքեր են թեկնածուները: Մեր այս հարցերին ի պատասխան՝ԱԳՆ-ից հայտնեցին, որ, ըստ սահմանված ընթացակարգի, ՀԱՊԿ-ում ՀՀ ներկայացուցչի նշանակման ժամանակ կտեղեկացնեն: Այն, որ ՀԱՊԿ-ն անգործության է մատնված եւ վերածվել է մի անարդյունավետ կառույցի, անգամ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ հարձակումների դեպքում է «խուլ ու համր» ձեւանում, դա փաստ է, բայց անհասկանալի է, թե ինչ է տալու այդ անվտանգային մեխանիզմից դուրս գալը, կամ դուրս չգալու մասին չհայտարարելը, բայց որեւէ մեկին չնշանակելը: Արդյոք Հայաստանի անվտանգության համար այլընտրանք ունի՞ Նիկոլ Փաշինյանը:

Արցախից քայլելով եւ ադրբեջանցիներին բարեւելով Հայաստան տեղափոխված Արցախի Ախ նախկին քարտուղար Սամվել Բաբայանը, եկած-չեկած, արդեն իր երկակի խաղերն է սկսել նաեւ այստեղ: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝Սամվել Բաբայանը Արցախից տեղահանված եւ Հայաստանում բնակություն հաստատած շատ արցախահայերի հորդորել է գնալ ու մասնակցել ընդդիմության՝վերջերս ձեւավորված «Ազգային կոմիտե»-ի հանրահավաքներին: Բաբայանն այս քայլին գնացել է՝հանուն «Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանի: Ինչպես մեր հավաստի աղբյուրներն են փոխանցում, Սամվել Բաբայանը արցախցիներին ասել է, թե պետք է մասնակցել ընդդիմության հանրահավաքներին, քանի որ Թեւանյանը «մերն է»: Տեղահանված արցախցիների մեծ մասն էլ, ականջալուր լինելով Սամվել Բաբայանի կոչին, գնացել են ու մասնակցել են իշխանության հրաժարականի պահանջով հավաքներին, որոնք ընդամենը 2-3 օր տեւեցին: Ստացվում է, որ նույն Սամվել Բաբայանը, որը Արցախում համարվում էր Նիկոլ Փաշինյանի խոսնակը, երկակի խաղեր է խաղում՝մի կողմից Նիկոլ Փաշինյանին ու նրա առաջ քաշած վտանգավոր թեզերն է պաշտպանում, մյուս կողմից՝կոչ է անում արցախցիներին, որ նրա հրաժարականի պահանջով հանրահավաքներին մասնակցեն: Մեզ հետ զրույցում Անդրանիկ Թեւանյանը, անդրադառնալով այս տեղեկությանը, ասաց, թե այն չի համապատասխանում իրականությանը: «Դա բամբասանք է: Ես ինչ մեկնաբանեմ, եթե նման բան չկա: Ինչ վերաբերում է մեր հավաքներին, ապա դրանց բոլորն էլ պետք է մասնակցեն, այդ թվում՝արցախահայերը: Մեր հավաքներին միշտ էլ մեծ թվով արցախահայեր են եղել եւ լինելու են»,- ասաց Թեւանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է՝Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում, բացի անշարժ գույքից եւ ոսկյա իրերից, գրավադրված ապրանքների շարքում կան նաեւ կենդանիներ: Քանի որ հայերս սովորություն ունենք ոսկյա իրեր գրավադնել, այս հարթակում կա ոսկյա իրերի լայն տեսականի, բայց կենդանիներն ինչպես են գրավադրվել, անհայտ է: Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում կարող եք գտնել 25 հազար 126 դրամ արժողությամբ Բուլդոգ ցեղատեսակի շուն, տարիքը՝8-9 ամսական: Հաջորդ կենդանին եւս շուն է, եւ «Նկարագրություններ» բաժնում գրված է. «Հավանաբար Տոյ Սպանիել/Պապիլոն/ եւ Չիխուախուա ցեղատեսակների խառնուրդ, մոտ 8-15 ամսական»: Աճուրդում շատ են նաեւ առօրյա օգտագործման իրեր՝մանկական հագուստ՝1000, 2000, 3000 դրամ արժեքով: Ամենահետաքրքիրն այս շարքում 35 հազար 21 դրամ արժողությամբ սանրերի խուրձն էր՝744 հատ, նկարագրությունը՝«Նոր, ապրանքային տեսքը պահպանված»: Հաջորդը եւ ամենաուշագրավը հեմոդիալեզի սարքերի՝աճուրդում գտնվելն էր. այն արժե 64 հազար դրամ այն պատճառով, որ տեսքից այն բավականին հին է: Բազմիցս առողջապահական ոլորտի մասնագետները բարձրաձայնում են, որ սակավ են հեմոդիալեզի սարքերը, եւ էքստրենալ արյան մաքրման այդ մեթոդով գործածվող սարքերը չեն բավականացնում: Առողջապահության նախարարությանը բազմիցս դիմել ենք այս ոլորտում սարքերի եւ կայանների համալրման համար, սակայն ոչ մի պատասխան չկա: Հիշեցնենք, որ Հայաստանում Առողջապահության նախարարության կողմից կան լիցենզավորված՝բժշկական հաստատությունների 14 մասնագիտացված բաժանմունք: Քանի որ քրոնիկ երիկամային անբավարարությունը, ըստ մահվան պատճառների, զբաղեցնում է 11-րդ տեղը, այս դեպքում 14 բաժանմունքները եւս կարող են չբավարարել: Մարզերում եւ Երեւանում բաշխված բաժանմունքները կան, սակայն պետպատվերները միայն Երեւանում կատարվող հեմոդիալեզի դեպքում է գործում: Այլ տեղերում պետպատվերի համակարգ հեմոդիալեզի դեպքում չի գործում:

ԶՐՈՒՅՑ

ՀԱՆՈՒՆ ՊԱՇՏՈՆԻ՞ ՀՐԱԺԱՐՎԵՑ ՔՎԵԱՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը երեկ չի մասնակցել Հռոմի ստատուտի հարցի քվեարկությանը: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Գուրգեն Արսենյանը հատուկ չի մասնակցել քվեարկությանը, քանի որ առաջիկայում Արսենյանին պետք է նշանակեն ՌԴ-ում Հայաստանի դեսպան: Ըստ մեր տեղեկությունների՝ Արսենյանը հույս ունի, որ առաջիկայում պետք է հաստատվի իր ագրեմանը, ինչի նպատակով անգամ իր ամերիկաբնակ որդուն, հարսին եւ թոռներին տեղափոխել է Երեւան, որպեսզի ՌԴ-ն որեւէ խնդիր չտեսնի դեսպան նշանակելու հարցում:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել Գուրգեն Արսենյանի հետ վերը նշված տեղեկությունների վերաբերյալ զրուցելու համար: Արսենյանը շատ ագրեսիվ էր տրամադրված, ավելին՝ հայտարարեց, թե մենք «ագենտ» ենք, որ այդպիսի տեղեկությունների ենք տիրապետում:

-Պարոն Արսենյան, ինչո՞ւ երեկ ԱԺ-ում չմասնակցեցիք Հռոմի ստատուտի քվեարկությանը:

-Բարձր ճնշումս... Ես ինձ այնքան էլ լավ չեմ զգում, երեկ խորհրդարան չեմ ներկայացել, որովհետեւ բժշկի թուղթ ունեմ, որ ինքնազգացողությունս լավ չէ:

-Իսկ եթե մասնակցեիք քվեարկությանը, ո՞րն էր լինելու Ձեր դիրքորոշումը:

-Քանի որ չեմ մասնակցել,հետախուզական հարցեր մի՛ տվեք:

-Հետախուզական հարցեր չեն, ընդամենը փորձում ենք պարզել Ձեր դիրքորոշումը Հռոմի ստատուտի վերաբերյալ:

-Եթե լինեի ԱԺ-ում, իմ դիրքորոշմանը կծանոթանայիք:

-Ըստ մեր տեղեկությունների՝ Դուք չեք մասնակցել Հռոմի ստատուտի քվեարկությանը, քանի որ առաջիկայում Ձեզ պետք է նշանակեն ՌԴ-ում Հայաստանի դեսպան, իսկ այս քվեարկությունը կարող է խաթարել այդ գործընթացը. այս պահին դրված է Ձեր ագրեմանի հարցը: Որքանո՞վ է այս տեղեկությունը իրական:

-Ո՞վ է Ձեզ այդ առաջադրանքը տվել, որ նման բաներ փորփրեք, նման բաներ ճշտեք:

-Մեզ ոչ ոք որեւէ առաջադրանք չի տալիս, կա տեղեկություն, փորձում ենք Ձեզանից ճշտել:

-Ո՛չ, Դուք ակնհայտ առաջադրանք եք կատարում: Սա հերթական տարօրինակ վարքագծի դրսեւորումն է: Ես հիվանդ եմ եղել, չեմ մասնակցել քվեարկությանը: Ես արդեն պատասխանեցի Ձեր առաջին հարցին:

-Բայց մենք տեղեկություն ունենք՝ որպեսզի Ձեր՝ դեսպան նշանակվելու հետ կապված որեւէ խնդիր չառաջանա, Դուք Ձեր ամերիկաբնակ որդուն, հարսին ու թոռներին բերել եք Հայաստան: Չկա՞ նման բան:

-Ես իմ տղային, հարսին չեմ բերել, իրենք են որոշել ու եկել: Ես իրենց որեւէ տեղում գտնվելու որոշման վրա ազդեցություն չունեմ: Ձեր այս հետաքրքրությունը շատ նման է ուրիշ երկրների ծառայությունների կողմից իրականացվող հետախուզական հարցման: Ես այդպես եմ մտածում:

-Ո՛չ, որեւէ հետախուզական ծառայության հարցեր չեն, ընդամենը ունենք տեղեկություններ եւ ուզում ենք Ձեզնից ճշտել:

-Դուք լրագրող եք, բայց Դուք հատուկ հանձնարարություններ եք կատարում:

-Դուք հիմա մեղադրանքներ եք հնչեցնում, որի համար կարող ենք Ձեզ դատի տալ: Մենք ընդամենը փորձում ենք մեր ունեցած տեղեկությունները ճշտել Ձեզանից:

-Կարող եք դատի տալ: Դատարանում ես կպատասխանեմ այս հարցերին: Ես Ձեզ տեղեկացնում եմ, որ Ձեր հնչեցրած հարցերը հետախուզական ծառայության հարցեր են:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

Ո՞Վ Է ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԵՏԸ

Արդեն հայտնի է, որ Սարգիս Գալստյանը Ալիեւի վարչակազմի կողմից նշանակվել է Ստեփանակերտի դարեւ. նա ժամանակին աշխատել է Արցախի ԱԱԾ-ում, Բակո Սահակյանի հետ բարեկամություն է արել, երբ Բակո Սահակյանը դարձել է Արցախի ԱԱԾ տնօրեն (2001-2007):

Սարգիս Գալստյանը մասնագիտությամբ արեւելագետ է, ԵՊՀ շրջանավարտ, Շուշիի հյուրանոցում տնօրեն է աշխատել, ապա միջին կարգի պաշտոններ զբաղեցրել Արցախի կառավարությունում, բարեկամություն արել Արցախի նախագահի հետ:

Կասկած չունենաք, որ նա դեռ 90-ական թթ. է հավաքագրվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից: Սարգիս Գալստյանը լավ հարաբերություններ է ունեցել նաեւ Արցախի Հանրապետության լուծարման հրամանագիրը ստորագրած Սամվել Շահրամանյանի հետ:

Երբ 2020թ. ընտրություններից հետո Սամվել Շահրամանյանին ԱԱԾ տնօրենի պաշտոնից տանում են Արցախի ռազմահայրենասիրության նախարար, Սարգիս Գալստյանը դառնում է այդ նախարարության աշխատակազմի ղեկավար:

Սարգիս Գալստյանի քրոջ որդին՝ Վահե Հարությունյանը, Ստեփանակերտից լրագրող էր աշխատում Երեւանի թերթերից մեկի համար՝ հիմնականում վարկաբեկելով արցախցի այն պաշտոնյաներին, որոնք աշխատում էին նվիրումով եւ կոռուպցիայի մեջ չէին թաթախված:

Սարգիս Գալստյանը Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Գալստյանի հարազատ հորեղբայրն է եւ Բակո Սահակյանի հետ ունի քավոր-սանիկական կապեր:

Սարգիս Գալստյանը եղել է Արցախի կրթության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ավելի վաղ՝ Շուշիի շրջանի վարչակազմում պաշտոնյա, «Շուշի պլազա» հյուրանոցի տնօրեն:

Գալստյանը Facebook-ում հանդես է գալիս Սարար Շուշի կեղծանունով, իբր, բնակվում է Սանկտ Պետերբուրգում:

Նա Ստեփանակերտից զանգում է իր բարեկամներին եւ հորդորում վերադառնալ Ստեփանակերտ՝ ասելով, որ ամեն ինչ լավ է լինելու:

Վերջին ժամերի ընթացքում Սարգիս Գալստյանի մասին շրջող լուրերը հակասական կարծիքների պատճառ են դարձել: Նրան որակում են կամ՛ ծախված, ինչպես ներկայիս իշխանություններին, կամ՛ ազնիվ մարդ, ով չի ցանկանում լքել Արցախը եւ ստիպված է այդ քայլին գնացել: Սակայն կոչելով իրերն իրենց անուններով՝ նա դավաճանների շարքում համարվում է համար առաջին դավաճան, որը գործարքի գնաց թշնամու հետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏՈՐԴԻ ԴԵՐՈՒՄ Է

Ադրբեջանի դատախազը հետեւողական ջանքերով Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ մեղադրանքներ է առաջադրում, հետախուզում եւ կալանավորում: Իսկ ի՞նչ քայլեր է իրականացնում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Ադրբեջանի կողմից ձերբակալված ու կալանավորված Արցախի երեք նախագահների՝ Բակո Սահակյանի, Արկադի Ղուկասյանի, Արայիկ Հարությունյանի, Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանի, Արցախի արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանի՝ Հայաստան վերադառնալու համար: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի այս հարցման՝ ՀՀ գլխավոր դատախազությունից հայտնեցին. «Անձանց իրավունքների պաշտպանությունը մշտապես գտնվել է ՀՀ դատախազության ուշադրության կենտրոնում: Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունը կիրառում է օրենքով նախատեսված գործիքակազմը անձանց իրավունքները պաշտպանելու եւ վերականգնելու նպատակով»:

Իսկ թե Աննա Վարդապետյանը կոնկրետ ինչ գործիքակազմ է կիրառում, դատախազությունը չի մանրամասնել՝ նշելով, որ խնդիրը իրենց ուշադրության կենտրոնում է: Դատելով իրավիճակից՝ դատախազությունում եւս ՀՀ քաղաքացիների պես հանդիսատեսի նման հետեւում են, թե ինչպես են ադրբեջանցիները մեր հայրենակիցներին մեկիկ-մեկիկ կալանավորում: Խոշտանգումների մասին դեռ տեղեկություն չունենք:

ԶԱԽԱՐՈՎԱՅԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«Հայաստանում որոշումների կայացման գործընթացում հաշվի չի առնվում հասարակական կարծիքը»,- ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Կայացվում են որոշումներ, որոնք ունեն համազգային նշանակություն ոչ միայն այսօր, այլեւ ազգի պատմության համատեքստում: Իշխանությունները կայացնում են այդ որոշումները՝ չհիմնվելով հասարակական կարծիքի վրա, առանց հենվելու արդյունքների վրա»,- ասել է Զախարովան Հայաստանում ստեղծված իրավիճակի մասին:

Նա հավելեց, որ Հայաստանում իշխանության ներկայացուցիչների վերջնական գործողությունները հակասում են այն ամենին, ինչ նրանք խոստացել էին ընտրություններից առաջ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՐԵՄԼԻ ՈՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Կրեմլը Երեւանի կողմից Հռոմի ստատուտի վավերացումն անվանել է ոչ ճիշտ որոշում, իսկ Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ն զգուշացրել է, որ դա ամենաբացասական հետեւանքները կունենա երկկողմ հարաբերությունների վրա:

Հայաստանի խորհրդարանը հոկտեմբերի 3-ին վավերացրել է Հռոմի կանոնադրությունը: Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության ներկայացուցիչ Արծվիկ Մինասյանն ասաց, որ այս ընթացակարգը հակասում է Սահմանադրությանը, իսկ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները, որոնք հաստատել են այն, գերազանցել են իրենց լիազորությունները:

ՄՔԴ-ի իրավասությունը ճանաչված չէ այն երկրների կողմից, որտեղ ապրում է աշխարհի բնակչության կեսից ավելին: Դրանց թվում են Ռուսաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Եգիպտոսը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Իրանը, Ղազախստանը, Չինաստանը, Սաուդյան Արաբիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ Թուրքիան:

Ներկա պահին Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է միակ երկիրը, որը վավերացրել է «Հռոմի Ստատուտը», որտեղ մեծ թվով ռուս բնակիչներ են ապրում, եւ հակառակը՝ հետեւանքների մասին ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչները դեռ չեն բարձրաձայնում: Նշվում է, որ ամենաբացասական հետեւանքները կունենա երկկողմ հարաբերությունների վրա այդ որոշումը:

ՊԵՍԿՈՎԸ ՀԱՍՏԱՏԵՑ

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը մեկնաբանել է Politico թերթի հրապարակումը՝ Արցախում իրադարձություններից առաջ ԱՄՆ, ԵՄ եւ ՌԴ պաշտոնյաների հանդիպման մասին: Լրագրողների հետ զրույցում նա ասել է, որ շփումներ եղել են, բայց դրանք այն բանակցությունները չեն, որոնք նշված են եղել հրապարակման մեջ:

Ավելի վաղ Politico թերթը, հղում անելով իր աղբյուրներին, հայտնել էր, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների, ԵՄ-ի եւ Ռուսաստանի պաշտոնյաները ադրբեջանական օպերացիայի մեկնարկից երկու օր առաջ հանդիպում են անցկացրել Թուրքիայում՝ քննարկելու Լեռնային Ղարաբաղում իրավիճակի կարգավորման հարցը:

Հավելենք, որ ավելի վաղ Ռուսաստանի Դաշնության փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը լրագրողների հետ զրույցում ասել է, որ Հայաստանի կողմից Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության ընդունումը Ռուսաստանից հեռու մնալու ընդհանուր միտումի մի մասն է:

«Այս գործողությունը, ցավոք, տեղավորվում է վերջերս ձեւավորված միտումի մեջ: Երեւանից մենք տեսնում ենք ավելի շատ ցուցադրական քայլեր, որոնք ուղղված են Ռուսաստանից հեռու մնալուն», - ասել է Ռուսաստանի Դաշնության փոխարտգործնախարար Սերգեյ Ռյաբկովը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ԻՆՉՊԻՍԻ՞ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

«Վերջին իրադարձությունները հստակ ցույց տվեցին, որ եվրոպացի դիտորդները որդեգրել են ամենաստոր դիրքորոշումը»,- «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ մեկնաբանելով Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության գործունեությունը:

«Սկզբում նրանք զբաղված էին Հայաստանին հորդորելով եւ խոստումներ տալով, եւ պարզապես պաշտոնական Երեւանը գցեցին իրենց հաջորդ ծուղակները, հետո դարձան լուռ վկաներ, թե ինչպես է զարգանում իրավիճակը: Մոսկվայի միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ճանապարհից հետ պահեց հենց արեւմտյան հանրությունը՝ ԵՄ-ն եւ ԱՄՆ-ն: Բրյուսելն առաջին եւ հիմնական ձայներից էր, որ պետք չէ իրականացնել այն ամենը, ինչ պայմանավորվել են Մոսկվան, Երեւանն ու Բաքուն, այլ պետք է գնալ ինչ-որ հատուկ ճանապարհով: Թե որտեղ էր տանում այս հատուկ ճանապարհը, ցավոք, մենք բոլորս հիմա տեսնում ենք:

Թե ինչպես են ռուս խաղաղապահները հանդես գալիս հրադադարի հաստատման հարցում որպես միջնորդ, ԵՄ-ն այս ամենը դիտում էր կողքից՝ չմտածելով անգամ գործնական առումով ինչ-որ կերպ օգնելու եւ աջակցելու մասին: Ինչպես է ռուսական կողմը կազմակերպել հումանիտար օգնության առաքումը Լաչինի միջանցքի ապաշրջափակումից հետո, ինչպես է ուղեկցել Հայաստան մեկնող ղարաբաղցիներին... Բրյուսելն ու ԵՄ-ն ընդհանրապես լուռ նայեցին այս ամենին կողքից:

Դե, ինչպե՞ս լուռ... Բնականաբար, ՀՀ քաղաքացիներին ստեր ասելով, թե, իբր, Ռուսաստանը դավաճանել է իրենց: Ռուսաստանը չէր, որ դավաճանեց. Ռուսաստանը միշտ եղել է այնտեղ, միշտ դադարեցրել է արյունահեղությունը այս տարածաշրջանում, միշտ օգնել է ֆինանսապես, տնտեսական, մարդասիրական առումներով: Իսկ այն, ինչ պայմանավորվել էին Մոսկվայի միջնորդությամբ, Երեւանին հենց ԵՄ-ն է համոզել հետ կանգնել դրանք իրականացնելուց: Եվրամիությունն էր, որ դավաճանեց հայերին. ԵՄ-ն դարձել է տարածաշրջանում սադրիչ:

ԵՄ դիտորդները գնդակոծության տակ չեն ընկել եւ չեն զոհվել, ինչպես ռուս խաղաղապահները: Նրանք միայն հրահրել են, միայն դա գիտեն...

Անկեղծ ասած, Հայաստանում ԵՄ առաքելությունը ոչ մի կայունություն կամ դեէսկալացիա չի ապահովում, եւ նրա հիմնական խնդիրը Հայաստանի անվտանգությունը չէ, Երեւանի եւ Բաքվի միջեւ հարաբերությունների կարգավորմանը նպաստելը չէ, այլ հետախուզական մոնիտորինգը՝ի շահ Բրյուսելի, եւ իրավիճակի հրահրումը: Բարձրագոչ, միաժամանակ սուտ հայտարարությունների պակաս չկա»,- նշել է նա:

Մեկնաբանելով Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի վերջերս տված հարցազրույցը՝ Զախարովան հիշեցրել է, որ հենց ԵՄ-ն է գագաթնաժողովներ գումարել Պրահայում եւ Բրյուսելում, որտեղ Հայաստանի ղեկավարությունը ճանաչել է Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի տարածք: «Թեեւ մինչ այս Հայաստանի ղեկավարությունը ճիշտ հակառակն էր ասում: Մինչ այդ ասում էին, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը Հայաստանն է: Ինչո՞ւ Շառլ Միշելը չհիշեց ղարաբաղցի հայերի իրավունքներն ու անվտանգությունը:

Ինչո՞ւ Պրահայում եւ Բրյուսելում հանդիպումների ժամանակ ԵՄ-ն չառաջարկեց հոգ տանել ԼՂ բնակիչների անվտանգության մասին՝ լինելով պաշտոնական Երեւանի կուրատորը. որովհետեւ ԵՄ-ն զբաղվում էր միայն մեկ բանով՝ սադրանքով: ԵՄ-ն ու ԱՄՆ-ն երբեք չեն մտածել Լեռնային Ղարաբաղի բնակիչների ճակատագրի մասին. սա նրանց քաղաքական խաղի մի մասն է միայն: Նրանց մտածմունքը Ռուսաստանն է: Նրանց բոլոր գործողությունների հիմքում ռուսոֆոբ մոտեցումն է... Հենց Բրյուսելն է պատասխանատու այն բանի համար, որ Մոսկվայի, Երեւանի եւ Բաքվի բոլոր պայմանավորվածությունները փոխարինվեցին հենց այս գագաթնաժողովներով ԵՄ երկրների տարածքում, եւ Երեւանի դիրքորոշումը ձեւավորվել է ԵՄ ազդեցության տակ: Պետությունների ինքնիշխան իրավունքն է ձեւավորել իրենց դիրքորոշումը, բայց գոնե դա պետք է հետեւողական լինի»,- նշել է Զախարովան:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 4-ին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, արտակարգ եւ լիազոր դեսպան Վասիլիս Մարագոսի հետ. այս մասին տեղեկացնում են ԱԽ գրասենյակից:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանի Հանրապետության շուրջ ստեղծված անվտանգային իրադրության եւ Ադրբեջանի կողմից ռազմական հարձակման արդյունքում Լեռնային Ղարաբաղի հայության բռնի տեղահանության հետեւանքով ստեղծված իրավիճակի շուրջ:

Կողմերն անդրադարձել են նաեւ ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգի մի շարք հարցերի՝ ընդգծելով հետագա համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

ՓՈՐՁՈՒՄ Է ԶԻՆԵԼ

Ադրբեջանն անընդունելի է համարում Հայաստանին զինելու Ֆրանսիայի փորձերը: Նշենք, որ երեկ Ֆրանսիայի ԱԳ նախարար Կատրին Կոլոննան Արարատ Միրզոյանի հետ հանդիպմանն ասել էր, որ Փարիզը համաձայն է պայմանագիր կնքել Երեւանին ռազմական տեխնիկա տրամադրելու վերաբերյալ:

«Արձանագրեցինք, որ Փարիզը փորձում է ամեն գնով զինել Հայաստանին, որպեսզի նորից ներքաշի ագրեսիայի եւ ռազմական արկածախնդրության մեջ: Սակայն Ֆրանսիայի համար պետք է պարզ լինի, որ այդ ջանքերն ու մեր տարածաշրջանին միջամտելու՝ իր պատմական փորձերը կձախողվեն»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՉԻ ԿԱՅԱՆԱ

Թուրքական ընդդիմադիր մեդիայում հրապարակումներ կան այն մասին, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի վատառողջ լինելու պատճառով չեղարկվել է նրա՝Իսպանիա այցը, ինչպես նաեւ ներքին մի շարք միջոցառումներ: Միեւնույն ժամանակ ադրբեջանական աղբյուրները նշում են, որ Իսպանիա չի մեկնի նաեւ Իլհամ Ալիեւը, այսինքն՝ չի կայանա Ալիեւ-Փաշինյան հանդիպումը: Այս մասին հայտնում է պատմական գիտությունների թեկնածու Վարուժան Գեղամյանը:

Ադրբեջանական ԶԼՄ-ները հայտնում են, որ Ալիեւի՝ Իսպանիա չմեկնելու պատճառը Ֆրանսիայի ապակառուցողական դիրքորոշումն է, ինչպես նաեւ Էրդողանի հանդիպմանը մասնակցելու Փարիզի եւ Բեռլինի անհամաձայնությունը:

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

ԿՈԿԱԻՆԻ ԳՈՐԾՈՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Հուլիսի 23-ին ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս Արևմտյան մաքսատուն-վարչության ուղեւորների մաքսային հսկողության բաժնի աշխատակիցների հետ համատեղ բացահայտել էին թմրամիջոցների մաքսանենգության հերթական խոշոր դեպքը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտի դարձավ, որ գործով կալանավորված է կին. վերջինս Լոռենա Գաբրիելլե Օտիմ Դի Պյվանին է: Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ այն ուղարկվել է դատարան:

Ինչպես հայտնել էր ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, օպերատիվ տեղեկություն է ստացվել այն մասին, որ, հնարավոր է, Սան-Պաուլո-Փարիզ-Երեւան ավիաչվերթով Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանող ուղեւորներից մեկը Կոկաին տեսակի թմրամիջոց է տեղափոխում:

««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորային համալիրի մաքսային հսկողության գոտում անձնական մաքսային զննման է ենթարկվել Հայաստան ժամանած Բրազիլիայի քաղաքացի Լ.Պ.-ն:

Ունենալով կասկածներ, որ քաղաքացին, հնարավոր է, մարմնում թաքցնում է թմրամիջոցներ, վերջինս ենթարկվել է տեսազննության: Նրա մարմնում նկատվել են օտար մարմիններ, որոնք դուրս բերելու նպատակով ՀՀ ՊԵԿ Արեւմտյան մաքսատուն-վարչության եւ ՄԴՊ վարչության աշխատակիցների կողմից Բրազիլիայի քաղաքացին օդանավակայանից տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Բժշկական կենտրոնում իրականացված համակարգչային շերտագրման՝ սկանավորման արդյունքում պարզվել է, որ նրա հաստ աղիքի հատվածում առկա են գնդաձեւ օտար մարմիններ, որոնք վերջինիս մարմնից դուրս են բերվել բժշկական տարբեր միջամտությունների արդյունքում: Հայտնաբերվել է Կոկաին տեսակի թմրամիջոցին նմանվող 120 հատ օվալաձեւ պարկուճ, այդ զանգվածների ընդհանուր քաշը կազմել է 1216 գրամ: Հայտնաբերված թմրամիջոցի շուկայական արժեքը գերազանցել է 300 հազար ԱՄՆ դոլարը: Փաստի առթիվ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից կազմվել է մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի հատկանիշներով, եւ հայտնաբերված թմրամիջոցի զանգվածների հետ միասին տրամադրվել է Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ: Բրազիլիայի քաղաքացին ձերբակալվել է, այնուհետեւ՝ կալանավորվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Աշտարակ քաղաքի՝ 1983 թվականին ծնված քաղաքացին փորձել է ինքնասպան լինել:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝նա երկհարկանի մահճակալի վերեւի ճաղավանդակից փորձել է կախվելով վերջ տալ իր կյանքին:

Սակայն տեղեկացանք, որ հարազատները նկատել են ու կանխել նրա գործողությունները, շտապ տեղափոխել հիվանդանոց, որտեղ էլ բժիշկները վիճակը գնահատել են ծանր:

Դեպքից հետո իրավապահները հարցաքննել են հարազատներին, ու վերջինիս մտերիմներն ասել են, որ նա խաղամոլ է ու այդ ամենից դրդված էլ գնացել է այդ քայլին:

ԳՆԴԱԿԸ՝ ՎԵՐԱՔՆՆԻՉՈՒՄ

Հոկտեմբերի 2-ի տվյալներով՝ Երեւանում դեպտեմբերի 19-ից 25-ը տեղի ունեցած բողոքի ակցիաների արդյունքում նախաձեռնվել է 35 վարույթ, 57 անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 48 անձի մեղադրանք է առաջադրվել, եւ 31 անձ կալանավորված է:

Եվ հիմա կալանավորվածների հարցը հասել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, եւ գնդակը, այսպես ասած, ՀՀ վերաքննիչ դատարանի դաշտում է: Ըստ լուրերի՝ համատարած ազատումներ են սպասվում:

Նկատենք, որ դատական համակարգում խոսակցություններ են եղել այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը բողոքի ակցիաների դեպքերով անցնող անձանց մեծ մասին 10, 15, 1 ամսյա կալանք է տվել, ու մինչեւ ՀՀ վերաքնիչ դատարանում քննեն ներկայացված բողոքները, արդեն այդ անձինք կհայտնվեն ազատության մեջ:

Ավելին՝ դատական համակարգում այն կարծիքին են, որ միգուցե իրավապահները դատարաններին ասել են՝ իրավիճակը մեղմելու համար տարեք կարճաժամկետ կալանքի, որ մայրաքաղաքում լարված մթնոլորտը հանդարտվի:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼ Է

Ավետիք Նավոյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, հանդիսանալով պայմանագրային զինծառայող, կոչումով սերժանտ, պարտավոր լինելով 2021թ.-ի փետրվարի 16-ին՝ ժամը 10:00-ին ներկայանալ ծառայության վայր՝ մասնակցելու մարտական հերթապահությանը նախորդող նախապատրաստական փուլին, 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ, առանց հարգելի պատճառների, նշված ժամանակում չի ներկայացել ծառայության վայր, այլ միայն 2023թ.-ի փետրվարի 19-ին՝ժամը 18:00-ի սահմաններում, ինքնակամ ներկայացել է Թիվ զորամաս՝ զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելով 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տեւողությամբ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

2023 թվականի հոկտեմբերի 2-ին՝ ժամը 14:25-ի սահմաններում, հակառակորդը, ռասայական, ազգային, էթնիկ ծագումով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով, ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, դիպուկահար կրակոցներ է արձակել ՀՀ ՊՆ զորամասի պահպանության շրջանի՝արեւելյան սահմանագոտու մարտական դիրքում թիկունքային ապահովում իրականացնող «ԿԱՄԱԶ 43114» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ: Կրակոցների հետեւանքով մահացու հրազենային վիրավորում է ստացել նույն զորամասի զինծառայող Արման Տիգրանի Քոչարյանը, իսկ երկու զինծառայողներ ստացել են հրազենային վիրավորումներ եւ տեղափոխվել հոսպիտալ: Կրակոցներից վնասվել է նաեւ «ԿԱՄԱԶ 43114» մակնիշի ավտոմեքենան. հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ՋՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 15-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 15-րդ կետերով (երկու դրվագ) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ավելի ուշ հաղորդում է ստացվել այն մասին, որ հակառակորդը կրակոցներ է արձակել նաեւ տուժածներին տարհանելու եւ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով մարտական դիրք բարձրացող շտապօգնության՝ ՀՀ ՊՆ տվյալ զորամասի հաշվեկշռում գտնվող «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ: Դրա հետեւանքով վնասվել են ավտոմեքենայի հետեւի եւ ձախ կողային ապակիները, սակայն ավտոմեքենայում գտնվող անձինք չեն տուժել:

Նշված դեպքի առթիվ եւս ՀՀ ՔԿ ՋՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ եւ 15-րդ կետերի, ինչպես նաեւ 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերի հատկանիշներով:

Ելնելով արդյունավետ քննություն իրականացնելու անհրաժեշտությունից՝ նշված երկու վարույթները միացվել են: Կատարվում է նախաքննություն՝ կատարվածի հանգամանքները պարզելու, հակառակորդի գործողություններին վերջնական իրավական գնահատականներ տալու նպատակով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՌՆԱԳԱՂԹԱԾՆԵՐԸ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎԵՑԻՆ

Հոկտեմբերի 2-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը Արցախից բռնի տեղահանված անձանց Տավուշի մարզում կեցության պայմաններ ապահովելու եւ աջակցություն ցուցաբերելու խնդիրների վերաբերյալ աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել: Իջեւանի, Նոյեմբերյանի, Դիլիջանի, Բերդի համայնքապետարանները զբաղված են այդ համայնքներում արցախցիների ընտանիքներին տեղավորելու, նրանց համար կեցության պայմաններ ստեղծելու հարցերով: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեվան գյուղում տեղավորվել է 4 ընտանիք, Ջուջեւան գյուղում՝ նույնքան ընտանիք: Ջուջեւանի միջնակարգ դպրոցի տնօրեն Վասիլ Չիլինգարյանը հայտնեց, որ արցախցի դպրոցականների շնորհիվ դպրոցի աշակերտների քանակն ավելացել է 13-ով: Բերդ համայնքի բնակավայրերում տեղավորվել է 75 ընտանիք՝ 225 հոգի: Արցախցի ընտանիքներ կան, որոնք հայտնել են, որ իրենք Ստեփանակերտում են ապրել, չեն կարող բնակվել Բերդ համայնքի գուղերում, եւ մեկնել են Երեւան: Նմանապես Արցախից բռնագաղթած մի ընտանիք է եղել Իջեւան համայնքի Սեւքար գյուղում եւ չհավանելով գյուղի անբարեկագ փողոցները, կենցաղի պայմանները՝ հեռացել է Սեւքարից:

ԴԱՏ՝ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԴԵՄ

«Յուքոմ» ՓԲԸ-ն, ընդդեմ ֆուտբոլային ակումբ «Ուրարատու» ՍՊԸ-ի, գումարի բռանագանձման պահանջով քաղաքացիական հայց է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան: Այդ ֆուտբոլային ակումբը գրանցված է Տավուշի մարզի Սեւքար գյուղի 27-րդ փողոցի 11-րդ հողամասում: Հայցադիմումը վարույթ է ընդունվել դատարանի 2023թ. հուլիսի 11-ի որոշմամբ: Նույն որոշմամբ դատարանը որոշել է գործը քննել պարզեցված վարույթի կարգով, մերժել է հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը: Օգոստոսի 30-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում կայացած դատական նիստում դատավոր Նարինե Անանյանը հայտնել է, որ դատարանին պարզ չէ, թե բաժանորդ ֆուտբոլային ակումբը որ ամսվա համար որքան գումար վճարելու պարտականությունը չի կատարել, որի արդյունքում պարտքը կազմել է 51 հազար 500 ՀՀ դրամ, ընդ որում՝ անգամ հայցադիմումին կից ներկայացված «Հաշվից քաղվածքը»-ը չի պարունակում նշված տեղեկատվությունը: Դատարանը հայցվորի ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքին, որ հայցադիմումին կից դատարան է ներկայացվել էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը պատասխանող ֆուտբոլային ակումբ «Ուրարատու» ՍՊԸ-ի կողմից անստորագիր տարբերակով: Այս հարցերի վերաբերյալ հայցվորից պարզաբանումներ ստանալու նպատակով դատավոր Ն. Անայանը որոշել է սեպտեմբերի 29-ին դատական նիստ նշանակել, որը կայացել է: Քաղաքացիական գործի քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի հոկտեմբերի 9-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ի՞ՆՉ ՃԱԿԱՏԱԳԻՐ ԿՈՒՆԵՆԱ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԸ

Վիեննայում օրեր առաջ տեղի է ունեցել ՄԱԳԱՏԷ-ի (Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության) ամենամյա 67-րդ նստաշրջանը: Նստաշրջանի ընթացքում ադրբեջանական եւ թուրքական կողմի ներկայացուցիչները պահանջներ են ներկայացրել Հայաստանի ատոմակայանի տեխնիկական վիճակը վերանայելու վերաբերյալ:



Նրանք մասնավորապես նշել են. «Մեծամորի ԱԷԿ-ը կառուցված է բարձր սեյսմիկ գոտում հին տեխնոլոգիայիով եւ վտանգ է ներկայացնում տարածաշրջանի համար, ինչի առնչությամբ ադրբեջանական կողմը ՄԱԳԱՏԷ-ին խնդրում է առանձնակի ուշադրություն դարձնել դրա հետագա շահագործման նպատակահարմարությանը»:

Հիշեցնենք նաեւ՝ օրեր առաջ թուրքական լրատվամիջոցները հայտնում էին, որ քաղաքացիները դիմել են Թուրքիայի խորհրդարան Մեծամորի ԱԷԿ-ի կողմից ստեղծվող ռիսկերի դեմ միջոցներ ձեռնարկելու խնդրանքով:

Հավելենք նաեւ, որ Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) նախկին գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսին 2022 թվականի հոկտեմբերի 5-ին Մեծամորի ատոմակայան այցի ժամանակ դրական է գնահատել Մեծամորի ատոմային էլեկտրակայանում կատարված անվտանգային բարեփոխումները:

Մասնավորապես, նշել է. «Հայաստանի տնտեսությունը հենված է Մեծամորի ատոմային էլեկտրակայանի վրա, եւ Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալությունը շարունակելու է իր աջակցությունն առաջարկել՝ օգնելու ատոմակայանին ցածր ածխածնային էներգիան մատակարարել ապահով եւ անվտանգ կերպով: Որպես եմ տեսնել Մեծամորում արված անվտանգային բարեփոխումները, տպավորված եմ դրա նվիրված անձնակազմի հանձնառությամբ»:

Ատոմակայանի բնականոն գործունեությունը կարող է խաթարվել ոչ միայն թուրքական եւ ադրբեջանական կողմի ճնշումների պատճառով, այլ նաեւ Հայաստանի եւ Ռուսաստանի լարված հարաբերությունների պատճառով: Այս լարված իրավիճակում Ադրբեջանն ու Թուքիան փորձում են ճնշումներ գործադրել եւ Հայաստանի անկարող իշխանությունների միջոցով երկրում իրավիճակ փոխել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ

ԴՐԱՄՆ ԱՐԺԵԶՐԿՎՈՒՄ Է ⇨

Դրամը օր օրի արժեզրկվում է, փոխարենը եվրոն, ռուբլին ու դոլարը մեծ արժեքներով բարձրանում են: Արցախում ռազմական գործողությունների, տասնյակ հազարավոր արցախցիների բռնի տեղահանությանն ու Հայաստան տեղափոխվելուն զուգահեռ՝ վերջին օրերին եւ՛ դոլարը, եւ՛ եվրոն, եւ՛ ռուբլին, դրամի համեմատ, կտրուկ թանկացել են: Սա հայաստանաբնակների շրջանում անհանգստության մեծ ալիք է առաջացրել:

Վերջին տվյալներով՝ նախորդ մեկ շաբաթվա ընթացքում դրամն էժանացել է արդեն շուրջ 14 տոկոսով. սեպտեմբերի 19-ին՝ Արցախի դեմ Ադրբեջանի հարձակման օրը, բանկերը մեկ դոլարը վաճառում էին 387.5 դրամով, սեպտեմբերի 26-ին, երբ արցախցիների հոսքը Հայաստան սկսվել էր, փոխարժեքը մի փոքր էր ավելացել՝ հասնելով 390 դրամի: Երեկ երեկոյան դոլարը վաճառում էին 445 դրամով:

Հայկական արժույթը զգալի արժեզրկվել է նաեւ եվրոյի համեմատ: 5 օր առաջ 415 դրամով կարելի էր եվրո գնել, երեկոյան փոխարժեքն արդեն 470 դրամի հասավ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Կենտրոնական բանկի հետ՝ հասկանալու, թե ինչի հետ է կապված այս երեւույթը, ինչու է դրամն արժեզրկվում, իսկ եվրոյի, ռուբլու ու դոլարի արժեքը բարձրանում է:

Կենտրոնական բանկից տեղեկացրին, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է արտարժույթի փոխարժեքի ազատ լողացող ռեժիմ, եւ, հետեւաբար, փոխարժեքի փոփոխությունները պայմանավորված են արտարժույթի շուկայում առաջարկի եւ պահանջարկի փոփոխություններով:

ԲԵՆԶԻՆԻ ԱՐԺԵՔԸ

Հայաստանում բենզինը եւ հեղուկ գազը շարունակում են ինտենսիվ կերպով թանկանալ, նախկին՝ 350 դրամով մեկ լիտր բենզին գտնելն այսօր արդեն երազանք է: Մասնավորապես՝ Ռեգուլյար տեսակի բենզինը դարձել է 550 դրամ,Պրեմիումը՝ 580 դրամ, Սուպերը՝ 750 դրամ: Դե իսկ հեղուկ գազը, նախկին 100 դրամի փոխարեն, այսօր արժի 180 դրամ: Շարունակաբար թանկացումների այս ֆոնին արժեզրկվում է դրամը, ու թանկանում են ռուբլին, եվրոն ու դոլարը: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել ՄՊՀ՝ հասկանալու, թե ինչի հետ են կապված այս աստիճան թանկացումները, սակայն մեր զանգերն ու հարցերն անպատասխան մնացին:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Օկ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա, 40/5 հասցեում գտնվող 65,1 ք.մ. բնակելի տուն, 2,92 քմ /6,4 խմ, 14,6 գծամետր/ պարիսպ եւ 0,021837 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 30100000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 23.10.2023թ.-ին, 24.10.2023թ.-ին եւ 25.10.2023թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ գրավառուի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար գրավառուն որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՊԵՏԲՅՈՒՋԵՈՒՄ ՇԵՂՈՒՄՆԵՐ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ «ԼՈՒՅՍ» հիմնադրամը, ելնելով ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալներից, վերլուծել է ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2023թ. հունվար-օգոստոս ամիսներին:

Տնտեսական ակտիվության աճի տեմպը որոշակիորեն արագացել է 2023թ. օգոստոսին՝ պայմանավորված ծառայությունների եւ առեւտրի ոլորտների զարգացումներով: 2023թ. առաջին ամիսներին գրանցված տնտեսական աճի բարձր տեմպը պայմանավորված էր նախորդ տարվա սկզբին ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետեւանքով ՀՀ տնտեսության համար առաջացած դրական գործոններով, որոնց ազդեցության չափը աստիճանաբար նվազում է: Օգոստոսին արձանագրվել է ՏԱՑ-ի տեմպի արագացում, ինչը կարող է մի կողմից պայմանավորված լինել տուրիզմի աճի հետեւանքով ծառայությունների եւ առեւտրի աճով, կամ կարող է լինել միանգամյա գործոնների հետեւանք: Այդ մասին հնարավոր կլինի առավել հստակ դատողություն անել հաջորդ ամիս՝ սոցիալ-տնտեսական վիճակագրության հրապարակումից հետո:

Գնաճի տեմպը շարունակել է մնալ բացասական տիրույթում: Երկար ժամանակահատված բարձր գնաճից հետո՝ հունիս-օգոստոս ամիսներին, գրանցվել է գնանկում, որը, բնականաբար, էապես ցածր է ԿԲ թիրախից: Իրավիճակին արձագանքելով՝ ՀՀ ԿԲ-ն արդեն ընդհանուր առմամբ 1.0 տոկոսային կետով նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչը պետք է նպաստի տնտեսությունում ամբողջական պահանջարկի խթանմանը եւ գնաճի՝ դեպի թիրախին վերադարձին:

Արտահանման աճի տեմպը զգալիորեն դանդաղել է վերջին ամիսներին, ինչը կարող է պայմանավորված լինել ՀՀ ապրանքների գնային մրցունակության նվազմամբ: 2023թ. օգոստոսին արտահանման աճը կազմել է 6.1%, ինչն էականորեն ցածր է հուլիսի աճից: Հունվար-օգոստոս ամիսների աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 51.8% եւ հունվար-հուլիսի աճից ցածր լինելով 10.9 տոկոսային կետով: Կարեւոր է նշել նաեւ, որ աճի տեմպի դանդաղման գործում էական դեր ունի նաեւ «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման աճի տեմպի դանդաղումը (հունվար-հունիսի 17.7%-ից հունվար-հուլիսին դարձել է 13.0%), որի նպաստումը նվազել է 1.0 տոկոսային կետ:

Պետական բյուջեի կատարումը շարունակում է շեղված մնալ պլանավորվածից: Պետական բյուջեի պակասուրդը էապես շեղված է պլանավորված մակարդակից: Մասնավորապես, պլանավորված պակասուրդի փոխարեն, արձանագրվում է էական բարձր հավելուրդ: Կապիտալ ծախսերի՝ տնտեսության ներուժի եւ երկարաժամկետ աճի տեսանկյունից կարեւորության մասին բազմիցս խոսվել է, սակայն դրանց կատարողականի խնդիրը շարունակում է արդիական մնալ:

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՄԱՐ՝ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻՆ

Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անչափահասներին 100-հազարական դրամ տրամադրելու համար անհրաժեշտ է համապատասխան հարթակներում մուտքագրել նրանց տվյալները:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հոկտեմբերի 4-ին՝ «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսին, հայտնեց Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

«Երեկ երեկոյան ՀՀ կառավարությունը գրավոր ընթացակարգով հաստատել է 100 հազարական դրամների միանվագ տրամադրման որոշումը եւ հատկացման կարգը: Այն բոլոր ընտանիքներում, որտեղ կան անչափահաս երեխաներ, անհրաժեշտություն կա մուտք գործել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հատուկ հարթակ, որտեղ երեխայի մայրը կամ խնամակալը պետք է լրացնեն երեխայի ծննդյան վկայականի տվյալները, որպեսզի այդ տվյալները կապվեն մոր կամ խնամակալի տվյալներին: Այդ դեպքում գումարը կփոխանցվի մոր կամ խնամակալի բանկային հաշվին»,-ասաց Բաղդասարյանը:

Նա հիշեցրեց՝ այն մարդիկ, որոնք առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության կարգ ունեն կամ 75 տարեկանից ավելի բարձր են, նրանց գումարների հատկացումը կլինի «Հայփոստ»-ի միջոցով:

«Անհրաժեշտ է ժամ առաջ գնալ որեւէ առեւտրային բանկ եւ բացել քարտային բանկային հաշիվ: Հաշիվների բացումն անվճար է: Դրանից հետո որեւէ այլ գործառույթ իրականացնել պետք չէ, որովհետեւ այդ տվյալները Հայաստանի կենտրոնական բանկի կողմից փոխանցվում են միասնական սոցիալական ծառայություն, եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, ամփոփելով այդ տվյալները, գումարների փոխանցումը կիրականացնի»,- նշեց ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

Ավելի վաղ ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը հայտնել էր, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածները հոկտեմբերի 3-ից կարող են դիմել միանվագ 100-հազարական դրամ ստանալու համար:

Հավելենք, որ հոկտեմբերի 4-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը հայտնեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 100 632 անձ է ժամանել Հայաստան:

«Տեղահանված անձանց թիվն ավելացել է 7-ով»,-ասաց նա:

Բաղդասարյանի խոսքով՝ հաշվառվածների թիվը եւս ավելացել է եւ դարձել 96 940՝ ընդհանուր թվի գրեթե 97 տոկոսը:

Ինչ վերաբերում է ՀՀ բուժկենտրոններում բուժում ստացող անձանց, ապա այս պահի դրությամբ նրանց թիվը 324 է: 114-ի վիճակը ծանր է, 15-ինը՝ ծայրահեղ ծանր: Վերակենդանացման բաժանմունքներում շարունակում են բուժում ստանալ 8 երեխաներ:

097 ԿՈԴԸ ԿՍՊԱՍԱՐԿԻ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը բավարարեց «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի հայտը շարժական կապի տարածաշրջանային 097 կոդով «Ղարաբաղ տելեկոմի» առկա հեռախոսահամարների սպասարկումը Team Telecom Armenia-ին տրամադրելու մասին: Այսպիսով, «Ղարաբաղ Տելեկոմի» բոլոր բաժանորդները կկարողանան օգտվել շարժական կապի բոլոր ծառայություններից՝ պահպանելով իրենց հեռախոսահամարները:

«Հաշվի առնելով Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար կապ ունենալու կենսական անհրաժեշտությունը՝ մենք, «Ղարաբաղ Տելեկոմի» մեր գործընկերների հետ համագործակցելով, տեղահանության հենց սկզբից կարողացել ենք տրամադրել անվճար ինտերնետ եւ հեռախոսակապ: Այս ամբողջ ընթացքում նրանք միայն ցանցի փոփոխությամբ կարողացել են ստանալ լիարժեք կապ: Այս որոշումը շատ կարեւոր քայլ է անվտանգային տեսանկյունից. այսպես մեր հայրենակիցները կշարունակեն կառավարել իրենց բանկային հաշիվները, սոցիալական ցանցերի էջերը, մեսենջերները եւ մյուս՝ տվյալների բազա պարունակող հավելվածները՝ զերծ մնալով տարատեսակ թվային հարձակումներից»,- նշում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Տեղեկացնում ենք, որ արցախցիների համար հատուկ մշակված սակագնային փաթեթներից օգտվելու կամ առաջացած տեխնիկական խնդիրների դեպքում (SIM քարտերի արդիականացում եւ այլն) պետք է մոտենալ Team-ի ցանկացած մասնաճյուղ:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը: Առաջիկայում այս ցանցին կմիացվեն Հայաստանի ողջ տարածքում գործող բջջային կայանները, ինչի շնորհիվ զգալիորեն կբարելավվի նաեւ շարժական կապի որակը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՀԱԶԱՆԳՈՒՄ Է

ԲԼՈԳԵՐԸ ՇՈՐԹԵ՞Լ Է ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻՑ

Տիկտոկեր, դերասանուհի Մագա Հարությունյանը հետեւորդներին եւ ծանոթներին կոչ է անում զգույշ լինել կեղծիքներից: Մագան հաղորդագրություն է տարածել, որում պատմում է, որ իր անունով կեղծ էջի պատճառով ոչ միայն ինքը, այլեւ իրեն վստահող լսարանը հայտնվել են անախորժության մեջ: Դերասանուհին նշում է, որ վերջին շրջանում իրեն հետապնդում են, տարբեր մարդկանց կողմից ստանում է սպառնալիքներ:

«Վերջին շրջանում իմ կյանքում շատ տարօրինակ բաներ են տեղի ունենում, օրինակ՝ ինձ մեքենայի տակ են գցում: Մարդիկ, որոնց կյանքումս չեմ տեսել, չեմ ճանաչում, մոտենում են ինձ ու սկսում ինձ հետ շատ վատ խոսել, սպառնալ: Կամ, օրինակ, միշտ մեքենաներ են լինում մեր տան բակում, որոնք ինձ հետեւում են: Մի խոսքով, ամեն ինչ ավելի քան լուրջ է: Այս ամենն այն պատճառով է, որ ինչ-որ մեկը Facebook-ում իմ անուն-ազգանունով ու իմ լուսանկարներով շատ ակտիվ էջ է վարում ու շփվում տարբեր տղամարդկանց հետ»,-Instagram-ում հրապարակած տեսանյութում պատմում է բլոգերը: Նա հավելում է, որ դեռեւս չգիտի՝ ով է այդ անձնավորությունը, բայց ունի կասկածներ:

«Խոսում է, պայմանավորվում հանդիպելու նպատակով, շորթում գումարներ, հետո նորից իմ անունից գրում է նույն մարդկանց, որ եթե իրեն չուղարկեն բավարար գումար, նամակագրությունը կուղարկի, օրինակ, այդ տղամարդկանց կանանց: Վերջին շրջանում ես առանց ուղեկցության տնից դուրս չեմ գալիս, քանի որ այդ ամենն ինձ համար շատ սթրեսային է»,-շարունակում է Մագան: Բլոգերը նշում է՝ այս մասին չէր խոսի երկրում ստեղծված այս դժվարին իրավիճակում, բայց, նրա խոսքով, իր անունից գումար են սկսել շորթել նաեւ կարիքի մեջ հայտնված արցախցիներից:

«Չկարողացա լռել, որովհետեւ վերջերս իմացա նաեւ, որ տվյալ էջը Արցախից եկած մեր հայրենակիցներից գումար է շորթել տան վարձակալության նպատակով, իսկ մարդիկ վստահելով գումարները փոխանցել են... Երբ իմացա դեպքի մասին, իմ էջում ավելացրի կապույտ նշանը, որից հետո շատ կարճ տեւեց նրա գործունեությունը, բայց, ամեն դեպքում, հասցրել էր շատերից գումար շորթել»:

Դերասանուհի-բլոգերը կասկածում է, որ նույն անձը հիմա նույն գործունեությունը վարում է «ВКонтакте» սոցիալական ցանցում նշելով, որ այնտեղ էլ իր անունից էջ է բացվել, թեեւ ինքը տվյալ սոցիալական ցանցում գրանցված չէ: Մագան կոչ է անում իր հետեւորդներին զգոն լինել խաբեության զոհ չդառնալու համար:

Հիշեցնենք, նաեւ, որ վերջին շրջանում մամուլում տարածվում է այն տեղեկությունը, որ տիկտոկեր, բլոգեր Մագան շորթումներ է կատարում տարբեր անձանցից, սակայն աղմկահարույց դեպքերից մեկը հենց արցախահայությունից շորթման դեպքն է, ինչին էլ հենց անդրադարձել է նա ինստագրամյան իր էջում տեղեկացնելով, որ իր հետ կապ չունի այն էջը, որը վարվում է անհայտ անձի կողմից:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՊԱՐՈՒՀԻՆ՝ ՓԱՐԻԶՈՒՄ

Պարուհի Սոնա Եսայանը նոր լուսանկարներ է հրապարակել Փարիզից՝ հետեւորդների հետ կիսվելով նաեւ ուղեւորության մասին, որի շրջանակում պետք է իրականացներ իր երազանքներից մեկը: Պարուհին, սակայն, նշել է, որ դրա վրա չի կարողացել կենտրոնանալ հայրենիքում տիրող իրավիճակի պատճառով:

«Փարիզում 2-րդ անգամ եմ՝ առաջին անգամ՝ 2016 թ-ին, 2-րդը՝ հիմա: 2 անգամն էլ աշխատանքս է բերել ինձ այստեղ: Առաջին անգամ թիմիս աղջիկների հետ եկել էինք համերգային շրջագայությունների, իսկ այս անգամ Փարիզում մասնակցելու էի համաշխարհային խորեոգրաֆ Յանիս Մարշալի մաստեր կլասին, բայց հենց եկանք այստեղ, երկրում սկսվեց մղձավանջը: Չեղարկեցի երազանքիս մաստեր կլասը, քանի որ հենց պատերազմական անորոշ, դժվար փուլում էին իմ դասերը. անհնար կլինէր կենտրոնանալ սովորելու վրա»,- պատմել է Սոնան: Նա հավելել է, որ շուտով կլինի Հայաստանում եւ կանցնի աշխատանքի:

«Վաղն արդեն կլինեմ Հայաստանում ու կսկսեմ աշխատել, սովորեցնել, ու երեւի աշխատանքն է, որ այս շրջանում կօգնի հոգեկան աշխարհս մի քիչ կազդուրել»:

ԲԱԲԻՋՆ ԱՆԿԵՂԾԱՑԵԼ Է

Հայկական ծագում ունեցող հայտնի բլոգեր Արթուր Բաբիչը, որը, սովորաբար, ամենաակտիվներից է Instagram-ում, վերջին շրջանում աչքի էր ընկնում իր պասիվությամբ: Բլոգերը չէր կիսվում նոր հրապարակումներով կամ ակտիվ Story-ներով, որոնցում հաճախ պատմում է իր կյանքի մասին: Բաբիչը երկարատեւ լռությունից հետո Instagram-ում հանդես է եկել հայտարարությամբ:

«Մի օր, թերեւս, կնստեմ ու մի մեծ հարցազրույց կտամ այն մասին, թե ինչ էր կատարվում իմ կյանքում հենց այս պահին, քանի որ իմ բացակայությունը պայմանավորված չէ «որեւէ hզոր կոնտենտի կամ մեկ այլ հետաքրքիր բանի ստեղծմամբ»: Պարզապես ես որոշակի դժվարություններ եմ ապրում, ես կասեի՝ մեծ դժվարություններ, որոնք չեն ցանկանում հեռանալ իմ կյանքից»,-անկեղծացել է նա: Հավելենք, որ բլոգերն իր հինգուկես միլիոն հետեւորդներին վերջին բովանդակությունը ներկայացրել էր սեպտեմբերի 18-ին:

ՍՊՈՐՏ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ

Մադրիդի «Ռեալի» անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը նշել է աշխարհի լավագույն ֆուտբոլիստին:

«Վինիսիուս Ժունիորն անհավանական ֆուտբոլիստ է: Ես նրան համարում եմ ուժեղագույններից մեկը, ում հետ երբեւէ խաղացել եմ նույն թիմում: Նրա հետ ամեն ինչ շատ ավելի հեշտ է ստացվում խաղադաշտում: Թերեւս, Վինիսիուսն է աշխարհի լավագույն ֆուտբոլիստը հիմա ինձ համար»,- Բելինգեմի խոսքը մեջբերում է Madrid Zone-ը:

Չեմպիոնների լիգայի երկրորդ տուրում «Ռեալը» 3:2 հաշվով պարտության էր մատնել Իտալիայի չեմպիոն «Նապոլիին», Բելգինգեմը դարձել էր գոլի եւ գոլային փոխանցման հեղինակ՝ ճանաչվելով հանդիպման լավագույն խաղացող: Նրա փոխանցումից հետո աչքի էր ընկել Վինիսիուսը:

ՀԱՎԱՍԱՐՎԵՑ ԿԱՍԻԼՅԱՍԻՆ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» գերմանացի հարձակվող Թոմաս Մյուլերը Չեմպիոնների լիգայում հաղթանակների քանակով (101 հանդիպում) հավասարվեց իսպանացի դարպասապահ Իկեր Կասիլյասին: Նրանք կիսում են երկրորդ տեղը:

Ռեկորդակիրը պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն է՝ 115 հաղթանակ:

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի երկրորդ տուրում «Բավարիան» 2:1 հաշվով հաղթել էր դանիական «Կոպենհագենին», Մյուլերը փոխարինման էր դուրս եկել 77-րդ րոպեին:

Մյուլերը «Բավարիայում» է հանդես գալիս 2009 թվականից:

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» եւ Վրաստանի հավաքականի կիսապաշտպան Խվիչա Կվարացխելիան նշել է իր ֆուտբոլային երազանքները:

«Երկու ֆուտբոլային երազանք ունեմ՝ բարձրացնել Չեմպիոնների լիգայի գավաթը եւ Վրաստանի հավաքականի հետ խաղալ Եվրոպայի կամ աշխարհի առաջնությունում»,- Կվարացխելիայի խոսքը մեջբերում է AS-ը:

Անցած մրցաշրջանում Կվարացխելիան «Նապոլիի» հետ մասնակցել է 43 հանդիպման, խփել է 14 գոլ, կատարել 14 գոլային փոխանցում՝ ճանաչվելով Իտալիայի առաջնության լավագույն խաղացող: Կվարացխելիայի պայմանագիրը «Նապոլիի» հետ նախատեսված է մինչեւ 2027թ. հունիսը:

Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 85 միլիոն եվրո:

● *Հոկտեմբերի 4-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Դեպի վերջ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե երբ է մերժվում կենսաթոշակ նշանակելը:

Անիտա Սուքիասյան (62 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Սուքիասյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը: Ի դեպ, աշխատող կենսաթոշակառուների կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներակայացրել է կենսաթոշակը նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու դիմում:

Ընդ որում, վերահաշվարկված կենսաթոշակը նշանակվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ամուսնալուծվելու համար ի՞նչ փաստաթղթեր պիտի ներկայացվեն:

Իզաբելլա Արամյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ամուսինների միջեւ առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց ամուսնալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում:

Ամուսնալուծության գրանցման համար ամուսինները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Եթե ամուսիններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին ամուսնալուծության մասին համատեղ դիմում տալու համար, ապա ամուսինների կամքի արտահայտությունը կարող է ձեւակերպվել ամուսնալուծության մասին առանձին հայտարարություններով: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացվում է անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական (առկայության դեպքում), ամուսինների համատեղ դիմումը ՔԿԱԳ մարմնում ամուսինների միջեւ փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար, ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով, ամուսինների դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության գրանցումը եւ ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնալուծության մասին ամուսինների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Ամուսնալուծության պետական գրանցման համար, ներառյալ վկայական տալը, գանձվում է պետական տուրք՝ 10000 ՀՀ դրամ: Ամուսնալուծության պետական գրանցման ժամանակ մինչամուսնական ազգանունը կրելու ցանկության դեպքում գանձվում է նաեւ 5000 ՀՀ դրամ պետական տուրք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ադրբեջանական լրատվամիջոցները հրապարակել են Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանի լուսանկարը:

Լրատվամիջոցները նշում են, թե նա ձերբակալվել է, տեղափոխվել Բաքու, եւ անգամ նրան արդեն փաստաբան է տրամադրվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	+1 +3 +12 +16
	Կոտայքի լեռներ	+1 +3 +10 +14
	Կոտայքի նախալեռներ	+4 +6 +16 +18
	Գեղարքունիք	+1 +3 +10 +14
	Լոռի	+4 +6 +14 +17
	Տավուշ	+7 +11 +16 +19
	Արագածոտնի լեռներ	+1 +4 +7 +11
	Արագածոտնի նախալեռներ	+4 +7 +15 +19

	Արարատ	+7 +10 +20 +22
	Արմավիր	+7 +10 +20 +22
	Վայոց ձորի լեռներ	+1 +3 +7 +10
	Վայոց ձորի նախալեռներ	+6 +10 +15 +18
	Սյունիքի հովիտներ	+10 +12 +16 +19
	Սյունիքի նախալեռներ	+10 +12 +15 +19
	ԼՂՀ	+7 +10 +17 +20
	Երեւան	+10 +12 +17 +19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*